

Գ. Բ. ԹՈՍՈՒՆՅԱՆ. Գրաբարի բառարանագրությունը, Երևան, «Զանգակ-97»
Հրատ., 2006, 232 էջ:

Գևորգ Թոսունյանը հայ բանասիրության մերօրյա անխոնջ մշակներից է նա հայկական համաբարբառների կազմության ամենակատիվ հեղինակներից է, մի քանի պատմիչների երկերի թարգմանիչ, գրաբարի դասագրքի համահեղինակ, գրաբարի քերականական կառուցվածքի բազմաթիվ հարցերը գիտական ուսումնասիրության ենթարկող, տարբեր բնույթի բազմաքանակ գրքերի խմբագիր և այլն, որոնք հաջողությամբ համատեղում է դասախոսական աշխատանքի հետ՝ դասավանդելով գրաբար և հայոց լեզվի պատմություն: Բնչպես տեսնում ենք, նրա ուսումնասիրության շրջանակը լայն է, և, ահա, ընթերցողի սեղանին է «Գրաբարի բառարանագրությունը», որն ամփոփիչ խոսք է հայ, մասնավորապես գրաբարի բառարանագրության պատմության մեջ:

Գիրքը, որ տպագրվել է ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտի գիտխորհրդի որոշմամբ, բաղկացած է ներածությունից (էջ 5-22), երկու մասից՝ համապատասխան չորսական զույգներով (առաջինը՝ էջ 23-135, երկրորդը՝ էջ 136-191), ունի ամփոփումներ, եզրակացություններ, ծանոթագրություններ, համառոտագրություններ, սկզբնաղբյուրներ և օժանդակ գրականության ցանկեր:

Ներածության մեջ հեղինակն ուղենշում է իր գերխնդիրը. պարզել գրաբար բառարանագրության անցած ուղին՝ սկզբնավորումից մինչև մեր օրերը (էջ 16): Բսկ այդ նպատակն իրագործելու համար անհրաժեշտ է քննության առնել գրաբարի տարբեր տեսակի բառարանները՝ սկսած Ֆրանչիսկո Ռիվոլայի «Բառագիրք հայոց»-ից (Միլան, 1621), և գրաբար մատենագրության համաբարբառները՝ կյանքի կոչվելուց մինչ օրս: Ակնարկային եղանակով տրվում է հայ բառարանագրության սկզբնավորման և ձևավորման պատմությունը, որն ուսումնասիրության նյութ է դարձել նաև տարբեր հեղինակների կողմից: Ըստ Հ. Ամալյանի՝ մինչև X դ. հայ բառարա-

նագրությունն ունեցել է միայն գործնական նպատակ, և ձեռագրերում կան բառարանագրական հարյուրավոր աշխատանքներ, անձանոթ բառերի բացատրության ցանկեր (զրոսարիաներ): Հետաքրքրական է, որ մինչև XIII դ. բառագիրք կամ բառգիրք անվանումները չեն հանդիպում (առաջին անգամ դրանք կիրառել է XIII դ. հեղինակ Հովհաննես Երզնկացին), գործածվում են բառք և սահմանք բառերը՝ «Բառք յունարէն», «Բառք Փիլոնի», «Բառք եբրայեցոց», «Սահմանք իմաստասիրականք» և այլն: 1512 թ. Հակոբ Մեղապարտը Վենետիկում լույս է ընծայում հայ առաջին տպագիր գիրքը՝ «Ուրբաթագիրքը», որից հետո հրատարակվում են տարբեր տեսակի բառարաններ, ինչպես՝ Ֆրանչիսկո Ռիվոլայ, «Բառագիրք հայոց» (Միլան, 1621), Գրեմես Գալանոս, «Բառագիրք ամենայն իմաստասիրական բառից հայոց եւ լատինացոց» (Հռոմ, 1645), Երեմիա Մեղրեցի, «Բառգիրք հայոց» (Ալիկոռնա, 1698), Մխիթար Սեբաստացի, «Բառգիրք հայկազեան լեզուի» (երկու հատորով, Վենետիկ, 1749, 1769), Գաբրիել Աւետիքեան, Խաչատուր Միրմէլեան և Մկրտիչ Աւգերեան, «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» (երկու հատորով, Վենետիկ, 1836-1837), Գրիգոր Փեշտամալճեան, «Բառգիրք հայկազեան լեզուի» (երկու հատորով՝ Գ. Պոլիս, 1844, 1846), Մկրտիչ Աւգերեանի «Առձեռն բառարան» (Վենետիկ, 1846) և այլն:

Գևորգ Թոսունյանն ընդգծում է, որ հայ բառարանագրության մի տեսակն էլ գրաբար մատենագրության համաբարբառներն են, որոնց պատմությունը սկիզբ է առնում վաղ ժամանակներից: Աստվածաշնչի, մասնավորապես չորս Ավետարանների բնագրերի համեմատական բնութագրումները անվանվում են համաբարբառ, և ասորական ծագման այդ բառը («խառնել, խառնվել, միախառնում, համախառնում» էջ 11) իմաստափոխությամբ գործածվում է նաև հայերենում: Առա-

ջին համաբարբառի հեղինակ է համարվում II դ. հեղինակ Տատիանոս Ասորին, որի համաբարբառը թարգմանվել է տարբեր լեզուներով, այդ թվում՝ նաև հայերեն: III դ. համաբարբառ է կազմում քրիստոնյա իմաստասեր Ամոն Աղեքսանդրացին, IV դ.՝ Եվսեբիոս Կեսարացին, որի համաբարբառը V դ. թարգմանվել է հայերեն: Հիշատակության արժանի է Փարիզի դոմինիկյան գիտնական, կարդինալ դե-Մանկտո Գառո Հուգոնի՝ Սուրբ գրքի լատիներեն բնագրի համաբարբառը (1263): Այլ երկրներում ևս կազմվում են նմանօրինակ բառարաններ: Մինչև XIX դ. վերջը ստեղծված հայկական համաբարբառների գլուխգործոցը Թադևոս Աստվածատրյանի Աստվածաշնչի համաբարբառն է (Երուսաղեմ, 1895): XX դ. 60-ական թվականներին ակադ. Արարատ Ղարիբյանի ջանքերով համաբարբառների քարտարան է հիմնադրվում, և շուրջ 25 տարում հրատարակվում է գրաբար մատենագրության ավելի քան 50 հատոր համաբարբառ:

Գրքի առաջին մասում նկարագրական և վերլուծական եղանակներով ամենայն մանրամասնությամբ բնութագրվում են գրաբարի տպագիր բառարանները՝ «Բառգիրք հայոց»-ից մինչև մեր օրերի բառարանները (գլուխառաջին), բացատրական բառարանները՝ «Բառգիրք հայոց», «Բառգիրք հայկազեան լեզուի», «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», ինչպես նաև Գր. Փեշտալճյանի բացատրական բառարանը, նորագույններից՝ Ռ. Ղազարյանի, Լ. Խաչատրյանի բառարանները: Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում բազմաթիվ բանասերների և լեզվաբանների բառարանագրությանը վերաբերող մեկնաբանություններն ու շտկումները, որոնք արդյունք են ՀՀԲ (Հին հայկազյան բառարանի) և ՆՀԲ (Նոր հայկազյան բառարանի) նյութերի համեմատական վերլուծության: Չափազանց ուսանելի են Նորայր Բյուզանդացու ՆՀԲ-ի սրբագրումները (էջ 63-73), վերջապես ուշագրավ է նաև Մկրտիչ Ավգերյանի նախաձեռնությունը՝ ՆՀԲ-ի համառոտված հիմքով «Առձեռն բառարանի» ստեղծումը (գլուխ երկրորդ): Երրորդ գլուխը վերաբերում է թարգմանական բառարաններին, դրանք են՝ Մանուկ Ջախջախեան. «Բառարան յիտալական լեզուէ ի հայ և ի տաճիկ

բարբառ» (Վենետիկ, 1846) և Նորայր Բիզանդացի. «Բառգիրք ի գաղղիերէն լեզուէ ի հայերէն (Կոստանդնուպոլիս, 1884): Չորրորդ գլխում բնութագրվում քննվում են մասնագիտական բացատրական բառարանները: Դրանցից են 1749 թ. Կ. Պոլսում լույս տեսած Արսեն Դպիր Կեսարյանի «Գիրք սահմանաց յոգնադիմի իրողութեանց» աշխատության մեջ տրված երկայունականի 528 էջանոց բառարանը, XIX դ. 2-րդ կեսին լույս տեսած կենսագրական և տարբեր գիտաճյուղերի վերաբերող բառարանները, ինչպես՝ Կարապետ Աբրրյանի «Համառօտ կենսագրութիւն երեւելի արանց» (պատկերագրող), Նշան Ճիվանյանի մասնագիտական և այլ բառարաններ: Գ. Թոսունյանը սրանցից մանրամասնորեն քննում է Նշան Ճիվանյանի աշխատությունը՝ կազմված երկու տարբեր բառարաններից:

Այս գլխում տեսական, գիտական մանրակրկիտ վերլուծության են արժանանում Մանվել Քաջունու հանրագիտական («Բառգիրք արուեստից եւ գիտութեանց եւ գեղեցիկ դպրութեանց»՝ եռահատոր, Վենետիկ, 1891-1893), Հարություն Ավգերյանի մասնագիտական («Բացատրութիւն չափուց և կշռոց», Վենետիկ, 1821), աստվածաշնչյան («Բառարան Սուրբ գրոց հանդերձ պատկերօք, աշխարհացոց եւ տախտակօք», Կ. Պոլիս, 1879), Մաղաքիա Օրմանյանի («Օրհասկան բառարան», Կ. Պոլիս, 1905-1908), Հրայր Աճառյանի ստուգաբանական («Հայերէն արմատական բառարան»՝ քառահատոր, Երևան, 1926-35, 2-րդ հրատ., Երևան, 1971-1979) բառարանները, ինչպես նաև նշվում է Բաղդասար Դպիրի, Մսեր Մսերյանի, Խորեն Գալֆայանի, Պ. Թերզյանի, Խ. Աթանասյանի և այլոց հանգաբառարանների մասին:

Երկրորդ մասում ներկայացվում են գրաբար մատենագրության համաբարբառները: Այս մասը ևս բաղկացած է 4 գլուխներից, որոնցում հանգամանորեն ցույց է տրվում համաբարբառների սկզբնավորման և կատարելագործման պատմությունը, որը դարերի պատմական իրողություն է, հայ բառարանագրության պատմության համար անհրաժեշտ և օգտակար գործընթաց:

Ըստ գլուխների հաջորդաբար քննվում են՝ Ա) Աստվածաշնչի հայկական համաբար-

բառները: XIII–XVII դ. դրանց սկզբնավորման ժամանակներն են, իսկ XVIII դ. սկզբից երևան են գալիս հայկական ինքնուրույն համաբարբառներ. առաջինը Անանիա Ալավերդյանի համաբարբառն է (Շամախի, 1709), հաջորդը XVIII դ. կեսից հանդես եկող հայտնի քերական և տաղերգու Բաղդասար Դպիրի համաբարբառն է, ապա Զմյուռնիայի Նոր Կտակարանի համաբարբառը: Հաջորդը, որ ավելի կատարելագործված է, Երուսաղեմի Մրբոց Հակոբյանց վանքի միաբան Թադևոս Աստվածատրյանի կազմած Աստվածաշնչի համաբարբառն է, որի համար հիմք է ծառայել Աստվածաշնչի 1860 թ. վենետիկյան հրատարակությունը: Բ) Համաբարբառ-բառարանները: Մեծ է Արարատ Ղարիբյանի դերը ՀՀ ԳԱԱ-ում գրաբար մատենագրության քարտարանների և համաբարբառների ստեղծման գործում: Կազմվում են նաև բառաքերականական համաբարբառներ: Գ) Բնագրային համաբարբառները: Մրանք մեծ թիվ են կազմում՝ Եզնիկ Կողբացի. «Եղծ աղանդոց», Կորիւն. «Վարք Մաշտոցի», Ագաթանգեղոս. «Պատմութիւն հայոց» և այլն, որոնց մասին հեղինակն գիտական ուշագրավ մեկնաբանություններ է անում՝ վկայակոչելով նաև այլ հեղինակների և ուսումնասիրողների կարծիքներն ու դիտողությունները: Դ) Բնագրային համաբարբառների կազմման սկզբունքները: Համառոտ խոսք է ասվում նաև համաբարբառների հայագիտական արժեքի մասին:

Աշխատության այս մասի ամփոփումը խոսուն է. համաբարբառներն ավելի հին ծագում ունեն, քան բառարանները: Համաբարբառները հետազոտության պատրաստի նյութ են տարբեր մասնագիտությունների

տեր մտավորականների համար և հարյուրավոր անգամ հեշտացնում ու արագացնում են հետազոտողի աշխատանքը (համաբարբառներից օգտվողների համար սա գորեղ իրողություն է) (նույն տեղում) և այլն:

Ամփոփման բնույթ ունի նաև «Գրաբարի բառարանների դասակարգում» (էջ 193-196), որտեղ ներկայացվում են գրաբարի բառարանների տեսակները՝ ըստ բովանդակության և բնույթի: Նախ նշվում են բառարանների երկու տիպերը՝ ա) հանրագիտական և բ) բանասիրական կամ լեզվաբանական: Ընդ որում, հանրագիտական բառարաններն իրենց հերթին երկու տեսակ են՝ համընդհանուր և մասնավոր: Ապա ըստ այդ տեսակների մեկ անգամ ևս նշվում են գրաբարի համապատասխան բառարանները և ընդհանուր գծերով բնութագրվում գրաբարին վերաբերող բոլոր ժամանակների թեմատիկայով ու բովանդակությամբ հարուստ բառարանները:

Աշխատանքի վերջին մասում, Գ. Թոսունյանը քաջատեղյակությամբ բնութագրում է գրաբարի բառարանագրության անցած ուղին, մասնագետի և հայրենասիրական հպարտության զգացումով ներկայացնում այդ բնագավառի բոլոր երախտավորների ու գործընկերների ավանդը՝ այդպիսով հատուկ սեր արմատավորելով հայ բառարանագրության, հատկապես գրաբարի տպագիր բառարանների, համաբարբառների և դրանց հեղինակների նկատմամբ:

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գևորգ Թոսունյանի գրախոսվող սույն աշխատանքը արժեքավոր ներդրում է հայ բառարանագրության պատմության մեջ:

ԷԴՈՒԱՐԴ ՄԿՐՏՅԱՆ